



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՈՐՈՇՈՒՄ**

15 ապրիլ 2011 թ.

թիվ 22-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ
ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏԵՂԱՄԱՍԻ ԱՍՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

հաստատել «Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականին անցկացվելիք մարդահամարի տեղամասի» ամփոփ տեղեկագիրը՝ համաձայն հավելվածի:

Ցուցումներ մարդահամարի տեղամասի ամփոփ տեղեկագրի լրացման վերաբերյալ

1. Մարդահամարի տեղամասի ամփոփ տեղեկագիրը (Ձև թիվ 8) լրացնում է մարդահամարի տեղամասի վարիչն իր տեղամասի հրահանգիչ-հսկիչներից մարդահամարի նյութերն ընդունելուց հետո: Ամփոփ տեղեկագրի աջ անկյունում լրացվում է մարդահամարի տեղամասում ներառված հրահանգչական տեղամասերի քանակը, իսկ հասցեամասում՝ մարդահամարի տեղամասի համարը:

2. Եթե մեկ մարդահամարի տեղամասի մեջ ներառված են և՛ քաղաքներ, և՛ գյուղական բնակավայրեր, ապա լրացվում են երկու տեղեկագրեր՝ մեկը քաղաքների, մյուսը՝ գյուղական վայրերի համար:

Մարդահամարի տեղամասի ամփոփ տեղեկագրում լրացվում են տեղեկություններ յուրաքանչյուր քաղաքի և գյուղական համայնքի վերաբերյալ:

3. Եթե քաղաքային համայնքին ենթակա է (են) գյուղական բնակավայր (եր), ապա այդ բնակավայր(եր)ի վերաբերյալ հանրագումարները պետք է ներառվեն գյուղական վայրերի ամփոփ տեղեկագրում: Բոլոր այդպիսի դեպքերի համար համապատասխան նշում է արվում քաղաքների համար կազմված տեղեկագրի առաջին էջում՝ «Ծանոթություն» տողում:

4. Եթե քաղաքային և գյուղական բնակավայրերը բաժանված են երկու և ավելի հրահանգչական տեղամասերի միջև, ապա նախ գրառվում են տվյալ բնակավայրի հրահանգչական տեղամասի հանրագումարներն, այնուհետև՝ հանրագումարները՝ ըստ յուրաքանչյուր բնակավայրի:

5. Եթե մեկ հրահանգչական տեղամասը ներառում է մի քանի գյուղական համայնքներ, ապա նախ գրառվում են տվյալ հրահանգչական տեղամասի յուրաքանչյուր բնակավայրի կամ յուրաքանչյուր գյուղական համայնքի հանրագումարները, հետո՝ ամբողջ հրահանգչական տեղամասի հանրագումարները:

6. Մարդահամարի տեղամասի ամփոփ տեղեկագիրը (Ձև թիվ 8) լրացվում է հրահանգչական տեղամասերի (Ձև թիվ 7) համապատասխան տվյալների դուրսգրման եղանակով, ընդ որում Ձև թիվ 8-ի «Հաշվի է առնվել հաշվարարների կողմից» 1-ին բաժնում պետք է գրառվեն Ձև թիվ 7-ի առաջին բաժնի համապատասխան տվյալները, իսկ 2-րդ բաժնում «Հանրագումարը՝ հաշվի առնելով վերահսկիչ շրջագայությունը» Ձև թիվ 7-ի 2-րդ բաժնի տվյալները:

7. Մարդահամարի տեղամասերի ամփոփ տեղեկագրի «Վերահսկիչ շրջագայության արդյունքների ամփոփագիր» բաժինը լրացվում է հրահանգչական տեղամասերի ամփոփ տեղեկագրերի նույն բաժնի համապատասխան տվյալների հիման վրա: Մարդահամարի հարցաթերթերում հաշվեգրվածների ընդհանուր թվաքանակի (9-րդ սյունակի հանրագումարը) վերաբերյալ տվյալը «Ընդամենը՝ հաշվի առնելով վերահսկիչ շրջագայությունը» տողում պետք է հավասար լինի 9-րդ սյունակի հանրագումարին՝ «Ընդամենը հաշվառված է հաշվարարների կողմից» տողի տվյալին գումարած ամփոփ տեղեկագրի առաջին էջում լրացված «բաց թողնվածների ընդհանուր թվաքանակի» (1-ին սյունակ «Վերահսկիչ շրջագայության արդյունքների ամփոփագիր») և հանած «Մարդահամարի հարցաթերթում սխալմամբ գրանցվածների» ընդհանուր թվաքանակի (նույն ամփոփագրի 4-րդ սյունակը) վերաբերյալ տվյալները:

8. Կազմված հսկիչ թերթերի, վերահսկիչ փաստաթղթերի, ուղեկցող թերթերի և բնակչությանը տրված տեղեկանքների քանակի վերաբերյալ տվյալները ստացվում են Ձև թիվ 7-երի համապատասխան տվյալների հանրագումարների հիման վրա:

9. Համոզվելով, որ փաստաթուղթը ճիշտ է կազմված՝ մարդահամարի տեղամասի վարիչը գրում է ամսաթիվը և ստորագրում փաստաթուղթը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի Հանրապետության
2011 թվականի մարդահամար

Հավելված
Հայաստանի Հանրապետության
վիճակագրության պետական խորհրդի
2011 թվականի ապրիլի 15-ի թիվ 22-Ա որոշման

քաղաքային

Ձև թիվ 8-----(*որը պետք չէ, ջնջել*)

գյուղական

<div><div></div><div>Մարդահամարի տեղամասում ներառված հրահանգչական տեղամասերի քանակը</div></div>
--

Ա Մ Փ Ո Փ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏԵՂԱՄԱՍԻ N-----

Մարզ-----Տարածաշրջան-----

Քաղաք-----Վարչական շրջան-----

Գյուղական համայնք-----

ՎԵՐԱՀՄԿԻՉ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Մարդահամարի ժամանակ հաշվարարի կողմից մարդահամարի հարցաթերթում բաց է թողնվել (մարդ)	Մարդահամարի ժամանակ հաշվարարի կողմից մարդահամարի հարցաթերթում սխալմամբ գրանցվել է (մարդ)				
	այդ թվում՝	այդ թվում՝			
Ընդամենը	ժամանակավոր ներկաներ	բացակայողներ	Ընդամենը	ժամանակավոր ներկաներ	բացակայողներ
<i>1.</i>	<i>2.</i>	<i>3.</i>	<i>4.</i>	<i>5.</i>	<i>6.</i>

Ընդամենը կազմվել են (քանակը)

Հսկիչ թերթ (Ձև թիվ 4)-----

Վերահսկիչ փաստաթուղթ (Ձև թիվ 6)-----

Ուղեկցող թերթ (Ձև թիվ 10)-----

Բնակչությանը տրվել է տեղեկանք մարդահամարն անցնելու մասին (Ձև թիվ 5)-----

Ծանոթություն-----
